Գրանցվ. 09.08.12թ
12412310

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՐԱՄԱՆ

31 հուլիսի 2012 թ N 238-Ն

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N51-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 11-ի «Ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» N51-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը՝

հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հոկտեմբերի 1-ից:

Կոմիտեի նախագահ՝ Գ. Խաչատրյան

Հավելված
ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի
2012 թվականի հոկտեմբերի 31-ի
N 238 -Ն հրամանի

«Հավելված
ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի
2011 թվականի փետրվարի 11-ի
N 51 -Ն հրամանի

Ձև

_____

լրացվում է հարկային տեսչության անվանումը

Փաստաթղթի համարը՝ _____
(լրացվում է հարկային տեսչության կողմից)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան՝

_____ [ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ]
հարկ վճարողի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը) ՀՎՀՀ

իրեն համարում է ավելացված արժեքի հարկ վճարող

[ ][ ][ ][ ] թ. [ ][ ] [ ][ ] -ից մինչև օրացուցային տարվա ավարտը:
օրացուցային տարին ամիսը ամսաթիվը

Տեղյակ եմ, որ ավելացված արժեքի հարկ վճարող եմ համարվելու հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարության մեջ նշված օրացուցային տարվա ավարտը, բայց ոչ շուտ՝ հայտարարությունում նշված օրը ներառող եռամսյակի առաջին օրացուցային օրվանից:

Կազմակերպության տնօրեն (անհատ ձեռնարկատեր)	_____ ստորագրությունը, անունը, ազգանունը
Հաշվապահ	_____ ստորագրությունը, անունը, ազգանունը

Հայտարարության ստացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _____ _____ 20 թ.
(լրացվում է հարկային տեսչության կողմից)

Թղթային տարբերակով ներկայացվելու դեպքում հայտարարությունը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն: Հարկային տեսչության կողմից հայտարարությունը հաշվառելուց (գրանցելուց) հետո մեկ օրինակը վերադարձվում է հարկ վճարողին:»: